Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(70)

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2024

ՀՏԴ 811.111՝23:367.622
DOI: 10.51307/18293107/laph/24.70-131

ԱՆԳԼԵՐԵՆ «ՀԱԳՈՒՍՏ» ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԻ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԶԱՆ ՄՈՒՍԵՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածում վեր են հանվում անգլերենի **clothes/հագուստ** բառիմաստային խմբի լեզվամշակութային առանձնահատկությունները: Ուսումնասիրությունը նպատակ ունի՝

- վերհանել և վերլուծել անգլերենի **clothes/հագուստ** հոմանիշային շարքը, շարքում ընդգրկված գոյականների իմակային կազմը, հնչյունական և բառակազմական առանձնահատկությունները՝ իմաստաբանական, ստուգաբանական և լեզվամշակութային մոտեցումների և մեթոդների համատեղությամբ, ըստ անհրաժեշտության նաև հայերենի զուգադրությամբ,
- դուրս բերել **clothes/հագուստ** բառիմաստային խմբի կենտրոնական բառը՝ նույնացուցիչը, որի միջոցով բառարաններում սահմանվում են բառիմաստային խմբի մնացյալ անդամները, տարանջատել բառիմաստային խմբի միջուկն ու եզրային շերտերը, դրանցում արտացոլված ինքնության ցուցիչները:

Ելնելով ուսումնասիրության նպատակից և լեզվական նյութի բնույթից՝ կիրառվել են *բառարանային համատարած ընտրանքի, լեզվաբանական զննման և նկարագրման, զուգադրական, բաղադրիչային վերլուծության և ազատ զուգորդումների մեթոդները*:

Հիմնաբառեր՝ *հագուստ, բառիմաստային խումբ, միջուկ և եզրային շերտ, իմակ, ինքնություն, լեզվամշակույթ*

Ներածություն

Բառիմաստային հարացույցի հիմնական միավորներից մեկը՝ բառիմաստային խումբը, հաճախ սխալմամբ նույնականացվում է իմաստային դաշտի հետ: Բառիմաստային դաշտը լեզվի բառամթերքի ամենամեծ իմաստային խումբն է և ներառում է բառիմաստային խմբեր,

թեմատիկ խմբեր[1], ինչպես նաև տարբեր խոսքի մասեր: **Բառիմաստային խմբում** միավորվում են մեկ խոսքի մասը ներկայացնող և բառիմաստում[2] ընդհանուր բաղադրիչներ ունեցող բառերը (Apresyan, 1995, Greimas, 1987): Բառիմաստային խումբը դիտարկվում է որպես ժամանակակից իմաստաբանության առանցքային հասկացություն և բառիմաստային հարացույցի հիմնական միավոր, և դրա ուսումնասիրությունը թույլ է տալիս վերհանել մշակութային շերտերն ու ինքնության ցուցիչները՝ ուսումնասիրվող լեզվամշակույթում:

Բառիմաստային խումբը վերլուծելիս հարկ է վերհանել նրա **կենտրոնական բառը՝ նույնացուցիչը,** որի միջոցով բառարաններում սահմանվում են բառիմաստային խմբի մնացյալ անդամները: Իսկ բառիմաստային խմբի կառուցվածքային առանձնահատկություններն առավել ակնառու են դառնում բառիմաստային խմբի միջուկն ու եզրային շերտերը տարանջատելիս: **Միջուկը** կազմում են այն բառերը, որոնք ձևաբանորեն և իմաստաբանորեն պարզ են, բայց միևնույն ժամանակ առավելագույնս են արտացոլում բառիմաստային խմբում ընդգրկված բառերի իմաստները, իսկ **եզրային շերտում** ընդգրկվում են այն բառերը, որոնցում հնարավորինս վառ են արտահայտված մշակութային առանձնահատկությունները և բառի արտահայտչական իմաստները (Гак, 1998):

Անգլերեն **clothes** գոյականի հոմանիշային շարքը **հագուստ** լեզվական նշանի[3] ամենաճավալուն բառիմաստային խումբն է, ուստի դրա ուսումնասիրությամբ կարելի է լավագույնս դուրս բերել բրիտանական լեզվամշակույթում տվյալ նշանի իմաստակառուցվածքային առանձնահատկությունները: Հիմք ընդունելով անգլերեն բացատրական, հոմանիշների, ինչպես նաև ստուգաբանական բառարանները[4]՝ վեր են հանվել **clothes** գոյականի հոմանիշային շարքը, հոմանիշների

---

[1] Թեմատիկ խումբը միավորում է բառերը՝ հիմք ընդունելով առարկաների, հասկացությունների կամ երևույթների արտալեզվական ընդհանրությունները: (Apresyan, 1995) **Հագուստ** թեմատիկ խումբն անգլերենում ներկայացված է ընդարձակ բառապաշարով, քանի որ հագուստի բազմաթիվ պարագաների և դրանց տեսակների անվանումներն անգլերենի բառապաշարի զգալի մասն են:

[2] Բառիմաստում դրսևորված իմակները գտնվում են որոշակի աստիճանակարգային հարաբերության մեջ: **Իմակը** նշանակության նվազագույն միավորն է, իսկ **իմույթը**՝ իմակների ամբողջությունը: (Greimas, 1987)

[3] Հիմք ենք ընդունել լեզվական նշանի սոսյուրյան մեկնաբանումը (Սոսյուր, 2008, էջ 32), երբ բառը համընկնում է նշանակիչի հետ, տվյալ դեպքում՝ **հագուստ** բառի հետ, որի նշանակյալը **հագուստ** բառի իմաստն է՝ իր իմակների բազմությամբ:

[4] Բառարանները ներկայացված են Գրականության ցանկում:

բառարանային սահմանումները, անհրաժեշտության դեպքում՝ զուգադրելով հայերենի հետ:

***Clothes/հագուստ* հոմանիշային շարքի լեզվամշակութային վերլուծությունը**

Անգլերեն **clothes** բառի համար բառարաններից և էլեկտրոնային շտեմարաններից դուրս է բերվել հետևյալ հոմանիշային շարքը՝ **clothing, wear, wearables, weeds, dress, gear, habits, get-up, outfit, costume, threads (slang), wardrobe, ensemble, garments, toilet, duds (infm.), apparel, clobber (slang), attire, garb, togs (infm.), toggery, vestment, glad rags (infm.), raiment (archaic, poetic), vesture, schmutter (slang), rig, rigging, rigout (infm.):**

Նշված հոմանիշային շարքում նկատվում են նույնարմատ բառեր՝ **clothes-clothing, wear-wearables, togs-toggery, vestments-vesture–vestiary, rig-rigging-rigout:** Նույնարմատ **clothes** և **clothing** բառերի հիմքում ընկած **cloth** բառը, սերելով հին անգլերենի **clað, claþ** բառից՝ «*կտոր, առագաստ, կտորե ծածկույթ, հյուսվածք կամ թաղիք՝ մեկին ծածկելու համար»* նշանակությամբ, ստացել է նաև *«հագուստ»* իմաստը նախագերմաներենից՝ ***kalithaz** (նաև հին ֆրիզ. **klath** «կտոր» հոլ. **kleed** «հագուստ, զգեստ», գերմ. **kleit, kleid** «հագուստ»): Կիրառվել է հոգնակի թվով՝ **claðas** - **cloths** և միայն XIX դարում է ստացել **clothes** բառաձևը՝ **cloths** ձևից տարբերվելու համար: Ինչ վերաբերում է **clothing** բառին, ապա այն սկզբում եղել է բայական գոյական՝ **clothe** բառից, այն է՝ *հագուստ հագնելը*՝ այս իմաստով մոտենալով **toilet** (*հագուստ հագնելը, պատրաստվելը*) բառին, որն ունի մեկ հավելյալ իմակ՝ *հատուկ պատրաստվելը*: XIII դ. արդեն **clothing** բառը կիրառվում է *հագուստ, հանդերձանք* նշանակությամբ:

Հաջորդը նույնարմատ **wear-wearables** զույգն է, որի նշանակության մեջ շեշտադրված է հագուստը **կրելու** իմակը, այն է՝ ցանկացած բան, որ նախատեսված է կրելու կամ մարմինը ծածկելու համար՝ հին անգլ. **werian** *ծածկել, հագնել, քողարկել* բայից (սկզբնաղբյուրը՝ հին գերմ. **werian,** որը **werian** *կանխել, պաշտպանել* բայի համանունն է, գոթ. **warjan**): Հետագայում այս բառը ստացել է նաև *հատուկ հանդերձ*, *հատուկ նշանակության հագուստ* իմակը, որի հիմքով էլ ստեղծվել են բազմաթիվ բառեր՝ ***underwear, outerwear, neckwear, sportswear, sleepwear, beachwear, nightwear, shapewear, dancewear*** և այլն:

Հարկ է նշել, որ անգլերեն **clothes** բառիմաստային խմբում առկայանում է հագուստի **կրոնական նշանակության *հագուստ*** իմակը: Եկեղեցական աստիճանակարգման ցուցիչ են **vestment** և **vesture**

նույնարմատ բառերը, որոնք **vest** բառի ածանցյալներն են: **Vest** (անթև բաճկոն) բառը մեր ուսումնասիրած բառարաններում ամրագրված չէ որպես **clothes** բառի հոմանիշ, հավանաբար այն պատճառով, որ առավելապես ընկալվում է որպես հագուստի առանձին պարագա: Ենթադրվում է, որ **vestment, vesture, vestiary** և **wear, wearables** հոմանիշները ծագում են միևնույն նախահնդեվրոպական արմատից ***wes-** *հագնել, ծածկել /to clothe/*: Հայերենում եկեղեցական հագուստի անվանումներ են **սքեմ, շուրջառ, փիլոն** բառերը (Մալխասեանց, 1944, էջ 1685, 2047, 2262) :

Անգլերեն **vest** բառի մեկ այլ ածանցյալ **vestiary** բառը Merriam-Webster բառարանը նշում է որպես **clothes** բառի հոմանիշ, սակայն մենք այն չենք դիտարկում այս բառիմաստային խմբում, քանի որ միայն **vestiary** ածականն է արտահայտում **հագուստի վերաբերություն**, մինչդեռ **vestiary** գոյականն ունի *հագուստ պահելու կամ հագնվելու համար նախատեսված սենյակ, զգեստապահարան* նշանակությունը, ինչպես **vestry** բառը:

Անգլերեն **dress** բառը հիմնականում թարգմանվում է հայերեն **զգեստ** բառով. երկուսն էլ ներառված են **հագուստի** հոմանիշների բառարանային սահմանումներում և դրանցով կազմվում են նոր բառեր ու բառակապակցություններ: Երկուսում էլ արտահայտված է *հատուկ հանդերձ, հատուկ նշանակության հագուստ* իմակը, սակայն եթե հայերեն **զգեստ** բառն ունի **տոնական կամ սգո հագուստ** իմակը, ապա անգլերեն **dress** բառի համապատասխան իմակն առավել ընդգրկուն է՝ *covering, adornment, or appearance appropriate or peculiar to a particular time (ծածկույթ, զարդարանք կամ որոշակի ժամանակին համապատասխան կամ բնորոշ տեսք),* և այստեղ արտահայտված է նաև *ժամանակային վերաբերությունը*: Փոխարենն անգլերենում առանձին բառույթով է ներկայացված **սգո հագուստ** իմակը՝ **weeds** *(1.զգեստ, որը կրում են ի նշան սգո (ինչպես այրու հագուստը, 2.սև կրեպե ժապավեն, որը ամրացնում են տղամարդու գլխարկին՝ ի նշան սգո),* որն ունի նաև սեռային ցուցիչ՝ արտահայտված յուրաքանչյուր սեռի համար նախատեսված սգո հագուստի պարագայով. կնոջ համար՝ **սգո զգեստ**, տղամարդու համար՝ **գլխարկին ամրացվող սև ժապավեն**: Հայերենում ունենք **սևազգեստ, սևավոր** ածականները:

Վերադառնալով անգլերեն **dress** գոյականին՝ նշենք նաև, որ այն չունի հայերեն **զգեստ** գոյականի փոխաբերական իմաստը՝ *այն, որով մի բան պատվում, ծածկվում է, ծածկույթ (բուսականություն, կանաչ, ձյուն և այլն)*, և այդ իմաստն անգլերենում արտահայտվում է **to dress** բայով:

Օրինակ՝ *Beautiful autumn tree branches* ***dressed in leaves and raindrops*** *were shining in the sun. (https://www.dreamstime.com)*

Անգլերեն **dress** **բ**առն առավելապես ընկալվում է որպես կնոջ հագուստի պարագա: Բացատրական բառարաններում այն ներկայացված է **dress** բառի նշանակության մեջ *(an outer garment (as for* ***a woman or girl****) usually consisting of a one-piece bodice and skirt-վերնազգեստ (****կնոջ կամ աղջկա համար)****, որը սովորաբար բաղկացած է մարմնի վերևի մասին հագնելու հագուստի պարագայից և կիսաշրջազգեստից)*:

Վերոնշյալ իմակն արտացոլված է նաև **apparel** բառում, այն է՝ something that clothes or adorns (մի բան, որը ծածկում կամ զարդարում է), օրինակ՝ *the bright* ***apparel*** *of spring (գարնան պայծառ հագուստը):*

Անգլերեն **clothes** բառիմաստային խմբում նկատելի է բառերի լեզվաոճական տարբերակվածություն: Մեծաթիվ են ոչ պաշտոնական բառապաշարին պատկանող բառերը՝ **duds, gear, get-up, glad rags, rigout, togs**, կան նաև բրիտանական սլենգային բառեր՝ **clobber, schmutter, threads** և հնաբանություններ՝ **habits, raiment**:

Այս բառերից մի քանիսին միավորում է ***հագուստ և անձնական իրեր*** իմակը՝ **gear, duds, clobber**, որոնց հայերեն ոչ պաշտոնական խոսքում կարող է համապատասխանել **շոր-մոր** կրկնավոր բարդությունը, որը հայոց լեզվին բնորոշ կրկնավոր բարդություններում հնչյունափոխության շնորհիվ ընդարձակել է **շոր-ի** բառիմաստը և ձեռք բերել **հավաքականության, բազմակիության** ավելի լայն նշանակություն:

Վերոնշյալ անգլերեն բառերից շատերն ունեն որոշակի հուզարտահայտչական, գնահատողական նշույթավորվածություն՝ **duds**, **rag, glad rags** (inf.): Կարծում ենք՝ այս խմբում կարելի է ընդգրկել նաև **schmutter** (հագուստ, կտոր) սլենգային բառը, որի բառարանային սահմանման մեջ արտացոլված չէ տվյալ նրբերանգը, սակայն համաձայն ստուգաբանության՝ այն սերում է եբրայերենից՝ **schmatte** (լաթ) և ունի նույն նշանակությունը, ինչ **rag** (լաթ) բառը:

Հետաքրքրական է, որ անգլերեն **clothes** բառի հոմանիշային շարքում առկա է **wardrobe** բառը, իսկ նրա հայերեն համարժեք **զգեստապահարան** բառն ամրագրված չէ հայերենի բառարաններում որպես **հագուստ** բառի հոմանիշ, թեև հայերենում նույնպես կարելի է հանդիպել նրա փոխանվանական կիրառությանը: Օրինակ՝ «*ՀԼՄ-ների ներկայացուցիչները վերլուծում էին Մելանյա Թրամփի* ***զգեստապահարանը****...»* (https://www.slaq.am/news/melanya-thramphi-zgestapaharany):

Անգլերեն **wardrobe** բառի իմակներից մեկը չի առկայանում հայ լեզվամշակույթում, այն է՝ **3a: the department of a royal household entrusted with the care of wearing apparel, jewels, and personal articles** (արքունիքի բաժին, որին վստահված է հագուստի, զարդերի և անձնական իրերի խնամքը), ինչը, կարծես, միանգամայն օրինաչափ կարելի է համարել՝ հաշվի առնելով բրիտանական աշխարհի պատկերում արքունական ընտանիքի՝ հագուկապը կարևորելու սովորույթը:

Առանձնակի ուշադրության է արժանի **habits** բառը, որն ինչպես *հասարակական դիրքի, մասնագիտության*՝ b: a costume characteristic of a calling, rank, or function (հասարակական դիրքին, մասնագիտությանը կամ գործառույթին բնորոշ հանդերձ), այնպես էլ *ազգային/մշակութային ինքնության ցուցիչ* է՝ c: a costume worn for horseback riding (ձիավարության համար նախատեսված հագուստ): Ու թեև այն հնաբանություն է, այսօր էլ կիրառական է, քանի որ մինչ օրս ձիերն ու ձիարշավը բրիտանական մշակույթի անքակտելի մասն են, ինչը հստակ արտահայտված է լեզվում **horse** բառի բառակազմական և բառակապակցական լայն կիրառմամբ: Ձիարշավը և ձիարշավի համար նախատեսված հագուստը կարևորվում է բրիտանական մշակույթում, քանի որ ինչպես իրենք են ասում՝ ***clothes make the rider*** (հագուստն է հեծյալին հեծյալ դարձնում): Ու թեև հայերեն բացատրական բառարաններում նույնպես գտանք հեծյալի հագուստն անվանող բառույթը՝ **ասպազգեստ** [5] (Աղայան, 1976, հ.1, էջ 112), այն գրեթե կիրառական չէ:

Անգլերեն **clothes** բառի հոմանիշների շարքում գերակշռում են պարզ և պարզ ածանցավոր բառերը: Այս բառիմաստային խումբն առանձնանում է ինչպես ներակա, այնպես էլ արտակա հոգնակիությամբ: Հոգնակիություն արտահայտող **–s/-es** վերջավորություն ունեն **32** բառից **10-ը:** Դեռ ավելին, հագուստ բառիմաստային խմբի այնպիսի անդամներ, ինչպիսիք են **threads, duds** և այլն, այս խմբում են ընդգրկվում՝ հոգնակի թիվ ստանալով միայն:

Այսպիսով, անգլերեն **clothes/հագուստ** բառիմաստային խմբում առկա են հետևյալ իմակները՝ *1.* ***մարդու մերկությունը ծածկելուն ծառայող հագնելիք, 2.վրան միաժամանակ կրելու հագուստների ու հարդարանքի ամբողջություն, կոստյում, հանդերձ, 3.հագնելը,***

---

[5] Ըստ Հ. Աճառեանի՝ հայերենում **ասպ** (պարսկ. ***ձի*** բառից) բառն առանձին չի գործածվել, կա միայն մի քանի բարդ և ածանցավոր ձևերում, ինչպես՝ **ասպազեն, ասպաստան, ասպետ, ասպարեզ, ասպատակ** և այլն: (Աճառեան, 1926, հ.1, էջ 270)

հագուստ կրելը, պատրաստվելը, 4. զգեստների ամբողջություն, հագուստեղեն, 5.նորաձևություն, 6. ժամանակաշրջանի, վայրի և դասային վերաբերություն ունեցող հագուստ և հարդարանքի պարագաներ, 7.կերպարային հանդերձանք, դիմակահանդեսի հագուստ, 8.բեմական հագուստ, 9.կրոնավորի հագուստ, ծիսական հագուստ, 10.հագուստի առանձին տարր, պարագա, 11. հագած, հագին ունեցած զգեստը, 12. սգո զգեստ, 13. հագուստի տարբեր հատկանիշներ (իրադրությանը համապատասխան, համահունչ, հատուկ առիթի, չսազող, շքեղ), 14. զգեստապահարան, 15.թագավորական կամ ազնվական տան բաժին, որին վստահված է հագուստ, զարդեր և անձնական իրեր պահպանելու գործը, 16. հագնելաձև, 17. կտոր, ցանց, կտրատեղեն, սպիտակեղեն, կտորի պատառ, 18. մաշված շոր, 19. հագուստի կրելի և դիմացկուն լինելը, 20. խանութում վաճառվող հագուստ, 21. հեծյալի հանդերձանք, զրահ (հատկապես ձիերի), 22.փխբ. այն, որով մի բան պատվում, ծածկվում է, ծածկույթ (բուսականություն, կանաչ, ձյուն և այլն):

Այսպիսով, անգլերենում **clothes** բառիմաստային խմբում առկայանում է մոտավորապես **22** իմակ: Իմաստային առումով ամենատարողունակն են **clothes, dress, wear, costume, apparel, wardrobe** բառերը, որոնցից **clothes** բառն առավել չեզոք է: Ներկայացնենք ասվածը հետևյալ գծապատկերով:

Գծապատկեր 1. *Անգլերեն **clothes/հագուստ** բառիմաստային խմբի միջուկը, մերձավոր և հեռավոր եզրային շերտերը*



Գծապատկեր 1-ում երևում է, որ ուսումնասիրվող բառիմաստային խմբի կենտրոնական միավորը **clothes** բառն է, *մերձավոր եզրային* շերտը կազմում են **clothing, wear, wearables, dress, outfit, costume, wardrobe, garments, apparel, ensemble, attire, vestment, vesture** բառերը, իսկ *հեռավոր եզրային* շերտում **weeds, gear, habits, get-up, threads, toilet, duds, clobber, garb, togs, toggery, rag, glad rags, raiment, schmutter, rig, rigging, rigout** բառերն են:

Անգլերենի **clothes/հագուստ** բառիմաստային խմբի իմաստային վերլուծությունը թույլ է տալիս վերհանել անգլիական **ինքնության** ցուցիչները, որոնք դուրս ենք բերել անգլերեն **clothes/հագուստ** բառիմաստային խմբի իմաստային դաշտում արտացոլված իմակներից ու դասակարգել՝ ըստ ինքնության տեսակների (Տե՛ս Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. *Անգլերենի **clothes/հագուստ** բառիմաստային խմբում արտահայտված ինքնության ցուցիչները*

ԱՆԳԼԵՐԵՆ
ազգային/մշակութային ինքնություն
սեռային ինքնություն
կրոնական ինքնություն
մասնագիտություն
բարեկեցություն
հոգեվիճակ
հասարակական դիրք, արքունական պատկանելություն, ազնվականություն
ժամանակաշրջան
վայր
նորաձևություն

Ինչպես երևում է Գծապատկեր 2-ում, անգլերեն **clothes/հագուստ** բառիմաստային խմբում առկայանում են *ինքնության* տարբեր ցուցիչներ՝ **ազգային/մշակութային, սեռային, կրոնական ինքնություն, մասնագիտություն, բարեկեցություն/անբարեկեցություն, բացասական հոգեվիճակ, հասարակական դիրք՝ արքունական պատկանելություն, ազնվականություն**, ինչպես նաև **ժամանակաշրջանի, վայրի, նորաձևության** վերաբերություն ունեցող ցուցիչները:

Եզրակացություն

Ուսումնասիրության արդյունքում կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

1. Բրիտանական աշխարհի լեզվական պատկերում հագուստն առկայանում է **clothes, clothing, wear, wearables, weeds, dress, gear, habits, get-up, outfit, costume, threads, wardrobe, ensemble, garments, toilet, duds, apparel, clobber, attire, garb, togs, toggery, vestment, rag, glad rags, raiment, vesture, schmutter, rig, rigging, rigout (32)** հոմանիշային շարքով:
2. Այս բառիմաստային խմբի **կենտրոնական բառը՝ նույնացուցիչը clothes** բառն է, որի միջոցով բառարաններում սահմանվում են բառիմաստային խմբի մնացյալ անդամները: Խմբում քանակական առումով գերիշխում է *հեռավոր եզրային* շերտը՝ **18** բառ, իսկ *մերձավոր եզրային* շերտը ներկայացված է **13** բառով:
3. Անգլերենի **clothes** բառի հոմանիշների շարքն առանձնանում է պարզ և պարզ ածանցավոր բառերի գերակշռությամբ և ներակա ու արտակա հոգնակիությամբ (32 բառից 10-ը ունեն արտակա հոգնակի թիվ, որոշ անդամներ այս բառիմաստային խմբում ընդգրկվում են հոգնակի թիվ ստանալու արդյունքում):
4. Բառիմաստային խմբում առկայնում է 22 իմակ, որոնք արտացոլում են բրիտանական լեզվամշակույթում **clothes/հագուստ** բառիմաստային խմբի լայն բովանդակային դաշտը և նրանում առկայացող ինքնության ցուցիչները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ
REFERENCES

1. Աղայան Էդ. (1976), Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, հ. 1-2: Aghayan E'd. (1976), Ardi hayereni bacatrakan bar'aran, Erevan, h. 1-2: (In Armenian)
2. Աճառեան Հ. (1926), Հայերեն արմատական բառարան, Երևանի Համալսարանի հրատ., Երևան, հ. 1-4:
   Atwar'ean H. (1926), Hayeren armatakan bar'aran, Erevani Hamalsarani hrat., Erevan, h. 1-4: (In Armenian)
3. Ընդհանուր լեզվաբանության դասընթաց (2008) /Ֆ.դը Սոսյուր, Թարգմ., առաջաբ. և ծանոթագր.՝ Ա. Մուրադյան, Խմբ. Ե. Թադևոսյան, Երևան, 372 էջ:

Y'ndhanowr lezvabanowt'yan dasy'nt'ac (2008) /F.dy' Sosyowr, T'argm., ar'ajab. & c'anot'agr.՝ A. Mowradyan, Xmb. E. T'ad&osyan, Erevan, 372 e'j: (In Armenian)

4. Մալխասեանց Ս. (1944), Հայերէն բացատրական բառարան. Երեւան: Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն:
Malxaseanc S. (1944), Hayere'n bacatrakan bar'aran. Erewan: Haykakan SSR' Petakan Hratarakchowt'iwn: (In Armenian)
5. Apresyan, Yu.D. (1995). Selected Compositions: In two volumes. Lexical Semantics. Moscow. 472 p.
6. British National Corpus: https://www.english-corpora.org/bnc
7. Cambridge Advanced Learner's Dictionary (2005). Cambridge: Cambridge University Press, 1572 p.
8. Collins Dictionary Online: http://www.collinsdictionaryonline.com
9. Greimas, A. J. (1987). On Meaning. Selected Writings in Semiotic Theory, Minnesota: University of Minnesota Press, 251 p.
10. https://www.dreamstime.com (17/11/2024)
11. https://www.slaq.am/news/melanya-thramphi-zgestapaharany (17/11/2024)
12. Macmillan English Dictionary for Advanced Learners (2007). 2nd ed., Macmillan Education, 1748 p.
13. Merriam-Webster Dictionary Online: https://www.merriam-webster.com
14. Oxford Advanced Learner's Dictionary of Current English by A. S. Hornby (2006). 7th ed., Oxford: Oxford University Press, 1715 p.
15. Partridge, E. (2006). Origins. A Short Etymological Dictionary of Modern English. London, N.Y.: Routledge Taylor and Francis Group, 4218 p.
16. The Etymological Dictionary of the English Language: http://www.etymonline.com
17. Гак В. Г. (1998). Языковые преобразования. - Москва. Языки русской культуры, - 764 с.
Gak V. G., Jazykovye preobrazovanija. –Moskva. Jazyki russkoj kul'tury,- 764 s. (In Russian)

РУЗАН МУСЕЯН - ЛИНГВОКУЛЬТУРОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ ЛЕКСИКО-СЕМАНТИЧЕСКОЙ ГРУППЫ “ОДЕЖДА” В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ

Ключевые слова: *одежда, лексико-семантическая группа, ядро и периферия, сема, идентичность, лингвокультура*

Статья посвящена лингвокультурологическому анализу лексико-семантической группы **“одежда**” в английском языке. Цель статьи - выделить и проанализировать семантические особенности и дифференциальные признаки языкового знака **“одежда”** и синонимического ряда **“одежда”.** Соответствующая лексико-семантическая группа рассматривается авторами в качестве основной единицы лексической парадигмы, изучение которой позволит выделить культурные пласты и маркеры идентичности в британской лингвокультуре.

RUZAN MUSEYAN - LINGUO-CULTURAL ANALYSIS OF LEXICO-SEMANTIC GROUP "CLOTHES" IN ENGLISH

Keywords: *clothes, lexico-semantic group, core and periphery, seme, identity, linguo-culture*

This article focuses on the linguo-cultural analysis of the lexico-semantic group "clothes" in English. Its primary aim is to examine and analyze the semantic features of the linguistic sign "clothes," including its synonymic set and distinguishing characteristics.

The lexico-semantic group is considered a central concept in modern semantics and a fundamental unit within the lexical paradigm. Thw study of this group provides an insight into cultural layers and identity markers within British linguo-culture, highlighting how language reflects cultural norms, values, and social identity.

Ներկայացվել է՝ 22.03.2024 թ.
Գրախոսվել է՝ 14.10.2024 թ.